

ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Այս նյութի մեծ մասը վերցված է Ռ. Բ. Հարրիսոնի Հին Կտակարանի Ներածություն գրքից, էջ՝ 976-1003 և ԼաՍոր, Հուբբարդ և Բուշի Հին Կտակարանի ուսումնասիրություն գրքից, էջ՝ 510-532: /R. K. Harrison's *An Introduction To the Old Testament* and LaSor, Hubbard, and Bush *Old Testament Survey*/.

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Եբրայերենում վերնագիրը «Փառաբանության երգեր» կամ «Փառաբանությունների երգեր» է (*Tehillim*, տես՝ Սաղմոս 145): Սա զարմանալի է, քանի որ սաղմոսների մեծ մասը ողբեր կամ տրտուներ են:

Բ. Սեպտուագինտայում (LXX) վերնագիրը *psalmos* է, որը նշանակում է «քաղել»: Սաղմոսների վերաբերյալ հունարեն այս տերմինը կիրառվում է Ղուկաս 20:42, 24:44 և Գործք 1:20-ում: Ոչ բոլոր սաղմոսներն են երգելու եղել նախատեսված երաժշտական նվագակցությամբ երգելու համար, սակայն LXX-ում ամբողջ գրքի վերնագիրը այսպես դրվեց:

II. ԿԱՆՈՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ա. Սաղմոսները Եբրայական կանոնի «Գրեր» (Kethubhim, Hagiographa) կոչվող երրորդ բաժնի մի մասն է: Եբրայական կանոնի այս բաժինը կազմված է՝

1. իմաստասիրական գրականությունից

ա. Հոր

բ. Սաղմոսներ

գ. Առակներ

2. տոնական գրքերից (*Megilloth*)

ա. Հռութ

բ. Ժողովող

գ. Երգ Երգոց

դ. Ող Երեմիա

ե. Եսթեր

3. պատմական գրքեր

ա. Դանիել

բ. Եզրաս

գ. Նեեմիա

դ. Մնացորդացներ

Բ. Սաղմոսները ՆԿ-ում ավելի շատ են մեջբերվում, քան ՀԿ-յան որևէ գրքում:

III. ԺԱՆՐԸ

Ա. Այս գրական ժանրը տարածված էր Հնագույն Մերձավոր Արևելքում: Աստվածաշնչյան սաղմոսները բաժնեկցում են Բարեկոնից, Եգիպտոսից և Քանանից օրհներգների ժանրը: Գիտնականները սերտ կապ են տեսել՝

1. Սաղմոս 104:20-30-ի և եգիպտական *Աթոն* /Aton/ (Ջ.Ա. 14-րդ դար) օրհներգի միջև:

2. Սաղմոս 29 գրեթե նման է Ուզարիտից *Բահադին* նվիրված մի պոեմի, բացառությամբ աստվածության անվան:

Բ. Ուզարիտ քաղաքից Ռաս Շամրայի տեքստերի հնագիտական բացահայտումը ցույց է տալիս քանանացիների պոեզիայի և Սաղմոսների միջև նմանությունը: Այս բացահայտումը օգնել է հասկանալու Սաղմոսաց գրքի ոճը և բառամթերքը (տես՝ *The Anchor Bible*, 3-րդ հատոր, Միտչել):

Գ. Այս գրական ոճը Իսրայելում հնագույն ժամեր էր՝

1. Մովսեսի երգը՝ Ելից 15:1-17
2. Մարիամի երգը՝ Ելից 15:21
3. Իսրայելի երգը՝ Թվոց 21:17-18
4. Դեբորայի երգը՝ Դատավորաց 5
5. Աննայի երգը՝ 1 Թագ. 2:1-10
6. Աղեղի երգը «Ուղիղի» գրքից՝ 2 Թագ. 1:17-27:

Դ. Երեք հիմնական ոճերը՝

1. փառաբանության սաղմոսները. բնութագրվում են ՀՐԱՄԱՅԱԿԱՆ մեկնարկով, ինչպես օրինակ՝ «փառաբանե՛ք Տիրոջը», «երգեցե՛ք Տիրոջը», և այլն
2. ողբի սաղմոսները. բնութագրվում են ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ մեկնարկով, ինչպես օրինակ՝ «Ո՛վ, Տեր», որին հաջորդում է տրտունջ կամ խնդրանք:
3. իմաստության սաղմոսներ. նման են իմաստասիրական գրականության կատեգորիաներին (այսինքն՝ ինչպես սպրեյ երջանիկ, հաջողակ, աստվածահաճո կյանք):

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Սաղմոսներից շատերի հեղինակի անունը գրված է վերնագրում կամ վերագրություններում, որոնք բացի երեսունչորս սաղմոսներից, բոլորում առկա են: Գոյություն ունի այս վերնագրերը դիտարկելու երկու կերպ՝

1. Դրանք Մագորեթիկ Եբրայերեն տեքստի մաս են կազմում և առկա են Մեպտուազինտայում (չնայած որոշ տարբերությամբ), ուստի կանոնական են: Սակայն, Մեռյալ Շովի Գալարներում հայտնաբերված Սաղմոսները չունեն այս վերնագրերն ու վերագրությունները:
2. Դրանք ներշնչված հեղինակների կողմից բնագրերում գրված չեն և պետք է դիտարկվեն որպես հնագույն ավանդություններ, ոչ թե ճշմարտություններ: Թվում է, թե դրանցից առնվազն երկուսը հակասում են մյուս կանոնական տեքստերին՝ ա. Սաղմոս 34-ի վերնագիրը ի հակադրություն 1 Թագ. 21:10բ (Փղտացի թագավորի անունը)
բ. Սաղմոս 56-ի վերնագիրը ի հակադրություն 1 Թագ. 21:10 (ինչպես է Դավիթը հասնում Գեթ)
գ. Սաղմոս 60-ի վերագրություններից դժվար է հասկանալ 2 Թագ. 8:13 և 1 Մնաց. 18:12-ում առկա սպանված թշնամիների թիվը, և ում կողմից են սպանվել:
3. Մեկ այլ խնդիր է այն, որ եբրայերեն «ի» վերջածանցը կարող է հասկացվել մի քանի կերպ՝
ա. «գրված . . . կողմից»
բ. «գրված . . . համար»
գ. «գրված . . . մեկին»
դ. «պատկանում է այս ժամանակին»
ե. «ինչ-որ մեկի ղեկավարությամբ»

4. Կարծում եմ դրանք ներշնչված չեն: Ես չեմ մեկնաբանի այս մեկնության գրքում դրանց մասին:

Բ. Հեղինակների Մագորեթիկ Երբայերեն Տեքստի վերնագրի նշանակությունը՝

1. Դավիթը՝ (1 Թագավորաց 16:16-18) (MT – Մագորեթիկ Տեքստ) 73 սաղմոսների հեղինակ, (LXX - Սեպտուագինտա) 84 սաղմոսների հեղինակ, (Վուլգատտա) 53 սաղմոսների հեղինակ:
2. Անանուն՝ 50 սաղմոսներ – 1,2,10,33,43,71,91,93-97,104-107,118-119,135,137,146-150
3. Ասափը՝ Դավթի երգչախմբի խմբավարը՝ ավագը (1 Մնաց. 15:16-17, 16:5, «Ասափի որդիները» նշվում են Նեեմ. 7:44-ում), 12 սաղմոսներ՝ 50, 73-83
4. Կորիսի որդիները՝ Ղևտացի երաժիշտների ընտանիք (1 Մնաց. 9:19, 15:17)՝ 11 սաղմոսներ՝ 42-49 բացի 43-ից, 84-88՝ բացի 86-ից:
5. Իդիթոմինը՝ Ղևտական երգչախմբի առաջնորդը (1 Մնաց. 16:41-42, 25:1-3, 2 Մնաց. 5:12)՝ 3 սաղմոսներ – 39, 62, 77
6. Սողոմոնը՝ 2 սաղմոս – 72, 127, «գրված . . . կողմից», «գրված . . . համար», «գրված ինչ-որ մեկի», «պատկանում է», «ժամանակներում» կամ «ինչ-որ մեկի ղեկավարությամբ»:
7. Մովսեսը՝ 1 սաղմոս – 90:
8. Եզրահացիները՝ (1 Մնաց. 6:33, 15:17)
ա. Եթանը՝ Սաղմոս 89 (ոմանք ենթադրում են Աբրահամը)՝ 1 Մնաց. 15:17,19
բ. Եմանը՝ Սաղմոս 88 (նույնպես Կորիսի որդիներից) 3 Թագ. 4:31, 1 Մնաց. 15:19

Գ. Հրեական Գրերից հեղինակի մասին ավանդույթները՝

1. *Բարա Բարթա* 14բ (Թ-ավմուդ)՝ «Դավիթն է գրել Սաղմոսների գիրքը տաս երեցների օգնությամբ, առաջինը Ադամի օգնությամբ, և Մելքիսեդեկի ու Աբրահամի և Մովսեսի ու Եմանի, Իդիթոմինի ու Ասափի և Կորիսի երեք որդիների»
2. *Մինեդդին* 38բ (Թ-ավմուդ) վերագրում է Սաղմոս 139-ը Ադամին և Սաղմոս 110-ը՝ Մելքիսեդեկին:

Դ. Սեպտուագինտան վերագրում է Սաղմոսները Երեմիային, Եզեկիելին, Անգեին և Չաքարիային (112, 126, 127, 137, 146-149):

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Սաղմոսների գրառման տարեթիվը դժվար որոշել մի քանի պատճառներով՝

1. Անհատական սաղմոսներն ունեն հատուկ դիպվածներ, որոնք պատճառ են հանդիսացել, որ գրվեն
2. եղել է ժամանակ, որ որևէ սաղմոսերգուի խոսքեր դարձել են հավատքի համայնքի խոսքերը
3. սաղմոսները հավաքագրվել են խմբագրական գործընթացի միջոցով և դարձել հինգ գիրք:

Բ. Սաղմոսները բովանդակում են Իսրայելի կյանքի բոլոր ժամանակահատվածներից բանաստեղծություններ՝

1. Հրեական ավանդույթն ասում է՝
ա. Ադամը գրել է Սաղմոս 139
բ. Մելքիսեդեկը գրել է Սաղմոս 110
գ. Աբրահամը գրել է Սաղմոս 89
դ. Մովսեսը գրել է Սաղմոս 90

2. Ժամանակակից գիտությունը Սաղմոսները բաժանել է երեք հիմնական ժամանակաշրջանների՝
 - ա. նախագերեվարման (I, II և IV գրքերը)
 - բ. գերության (գիրք III)
 - գ. հետգերության (գիրք V)

Գ. Ակնհայտ է, որ Սաղմոսներից շատերը պատկանում են՝ վերագրված են Դավթին՝

1. Դավթի յոթերորդ տղան էր, նվագող և երգիչ՝ 1 Թագ. 16:16-18
2. Նա նախաձեռնեց և կազմավորեց Ղևտական երաժշտական խմբեր կամ Տաճարի երգչախումբը՝ 1 Մնաց. 15:1-16:43, 25:1-31, 2 Մնաց. 29:25-30
3. Սաղմոսների առաջին երկու գրքերը վերագրված են նրան՝ Սաղմ. 72:20
4. Նրա Սաղմոսները հայտնվում են Սաղմոսագրքի բոլոր հինգ բաժիններում՝ գրքերում:

VI. Սաղմոսագրքի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ա. Գոյություն չունի ընդհանուր թեմա կամ ձևաչափ: Փոխարենը գոյություն ունի՝

1. ընդհանուր ներածություն (արդար մարդու հատկանիշները)՝ Սաղմոս 1
2. բոլոր հինգ բաժինների գրքերից յուրաքանչյուրն ավարտվում է հավատքի դավանաբանությամբ՝ 41:13, 72:18-19, 89:52, 106:48
3. ընդհանուր վերջաբան (դավանաբանություն)՝ Սաղմոս 150

Բ. Հինգ Գրքերի առանձնահատկությունները

1. Գիրք 1 – Սաղմոս 1-41
 - ա. բացի 4-ից բոլորն էլ վերագրված են Դավթին (1, 2, 10, 33)
 - բ. ՅԱՀՎԵՆ որպես Աստծո գերակշիռ անուն՝ ՅԱՀՎԵ-273 անգամ, Էլոհիմ՝ 15 անգամ
 - գ. պատմական միջավայրը ըստ երևույթին Դավթի Սավուդի հետ ընդհարման օրերն էին
2. Գիրք 2 – Սաղմոս 42-72 (72:20-ը ցույց է տալիս խմբագրին)
 - ա. Սաղմոս 42-49 Կորիսի որդիներին (բացի 43)
 - բ. Էլոհիմ որպես Աստծո գերակշիռ անուն, Էլոհիմ -164 անգամ, ՅԱՀՎԵՆ՝ 30 անգամ
 - գ. պատմական միջավայրը ըստ երևույթին Դավթի Թագավոր լինելու օրերն էին
3. Գիրք 3 – Սաղմոսներ 73-89
 - ա. Սաղմոս 73-83, Ասափը
 - բ. Սաղմոս 84-88, Կորիսի որդիները (բացի 86)
 - գ. 26 սաղմոսներ վերագրված են Դավթին
 - դ. Աստծո համար ՅԱՀՎԵ անունը նշվում է 44 անգամ, Էլոհիմ՝ 43
 - ե. պատմական միջավայրը ըստ երևույթին Ասորական ճգնաժամն էր
4. Գիրք 4- Սաղմոսներ 90-106
 - ա. Սաղմոս 101, 103, Դավթի
 - բ. Սաղմոս 90, Մովսես
 - գ. մյուս բոլորը անանուն են
 - դ. ՅԱՀՎԵ անունը կիրառված է 104 անգամ, Էլոհիմ՝ 7 անգամ
 - ե. պատմական միջավայրը հավանաբար Բաբելոնյան ճգնաժամն էր
5. Գիրք 5 – Սաղմոսներ 107-150
 - ա. Սաղմոս 119 մեծածավալ ակրոստիկոս է Աստծո Խոսքի վերաբերյալ
 - բ. ՅԱՀՎԵՆ կիրառվում է 236 անգամ, Էլոհիմ՝ 7 անգամ
 - գ. Սաղմոս 146-150 փառաբանության սաղմոսներ են, որոնք սկսվում են «Փառք տվե՛ք Աստծուն» խոսքով

դ. պատմական միջավայրը ըստ երևույթին Աստծո ապագա օրհնությունների վրա հույսն է

Գ. Սաղմոսների համարակալումը տարբերվում է

1. Հրեական ավանդույթը
 - ա. Բերախոթ 9ր՝ Սաղմոս 1 և 2 միասին համարվում են որպես 1
 - բ. Շաբաթ 16՝ սաղմոսների ընդհանուր թիվը կազմում է 147, որպեսզի համընկնի Հակոբի կյանքի տարիների հետ
2. Հունարեն թարգմանությունը
 - ա. Սաղմոս 9 և 10 միասին կազմում են մեկ ակրոստիկոս սաղմոս
 - բ. Սաղմոս 114 և 115 միասին են, երկուսն էլ Հալլել Սաղմոսներ են
 - գ. Սաղմոս 116 և 147 յուրաքանչյուրը բաժանված է երկու մասի
3. Սաղմոսների քանակը հնարավոր է կապված է առաջին ժողովարանում տարեկան Սուրբ Գրքի ընթերցանության ցիկլի հետ

Դ. Սաղմոսները խմբավորելու օրինակ՝

1. թեմատիկ
 - ա. փառաբանության երգեր
 - 1) Աստծուն՝ որպես Արարիչ, 8, 19, 104, 139, 148
 - 2) Աստծուն՝ ընդհանուր առմամբ , 33, 103, 113, 117, 134-136, 145-147
 - բ. գոհության երգեր՝ 9-10, 11, 16, 30, 32, 34, 92, 116, 138
 - գ. ողբի, սգի, տնտունջի երգեր
 - 1) հավաքական՝ 12, 14, 44, 53, 58, 60, 74, 79, 80, 83, 85, 89, 90, 94, 106, 123, 126, 137
 - 2) անհատական՝ 3-7, 13, 17, 22, 25-28, 31, 35, 38-43, 69-71, 86, 88, 102, 109, 120, 130, 139-143
 - դ. թագավորության մասին երգեր
 - 1) Աստված որպես Թագավոր՝ 47, 93, 96-99
 - 2) Իսրայելի թագավորը կամ Մեսիան՝ 2, 18, 20, 21, 45, 72, 89, 101, 110
 - ե. Միոնի մասին երգեր՝ 46, 48, 76, 84, 87, 122
 - զ. պատարագի երգեր՝
 - 1) ուխտի նորոգության՝ 50, 81
 - 2) քահանայական օրհնությունների՝ 134
 - 3) Տանարի վերաբերյալ՝ 15, 24, 68
 - է. իմաստության վերաբերյալ երգեր՝ 36, 37, 49, 73, 111, 112, 127, 128, 133
 - ը. ՅԱՀՎԵԻ հավատարմության վրա հավատքի վերաբերյալ երգեր՝ 11, 16, 23, 62, 63, 91, 121, 131,
 - թ. սուտ աստվածների և կռապաշտության դատապարտության երգեր՝ 82, 115
2. հեղինակի կամ խոսնակի կողմից՝
 - ա. Դավթի երգերը, որոնք Աստծո համար հիմնականում կիրառում են ՅԱՀՎԵ անունը՝ Սաղմոս 1-41
 - բ. Դավթի երգերը, որոնք Աստծո համար հիմնականում կիրառում են *Էրհիմ* անունը՝ Սաղմոս 51-72
 - գ. Դավթի Ղևտացի երգիչների և երաժիշտների երգերը՝
 - 1) Կորիսը և որդիները՝ Սաղմոս 42-49, 84-88
 - 2) Ասափը և որդիները՝ Սաղմոս 73-83
 - դ. փառաբանողների կողմից երգեր՝ Սաղմոս 111-118, 140-150
 - ե. ուխտավորների երգեր, որոնք գալիս էին Երուսաղեմ տոնական օրերին երկրպագության համար՝ Սաղմոս 120-134

3. Իսրայելի պատմության մեջ պատմական դեպքերի հիման վրա՝ ըստ վերագրության կամ բովանդակության՝ Սաղմոս 14, 44, 46-48, 53, 66, 68, 74, 76, 79, 80, 83, 85, 87, 108, 122, 124-126, և 129

Ե. Փոխկապակցված սաղմոսներ

1. Սաղմոս 14 և 53 նույնն են, բացառությամբ Աստծո անվան՝
 - ա. Սաղմոս 14-ում ՅԱՀՎԵ
 - բ. Սաղմոս 53-ում՝ *Էլոհիմ*
2. Սաղմոս 103 ու 104 կապված են՝
 - ա. միևնույն սկիզբն ու վերջաբանը
 - բ. Սաղմոս 103-ում նշվում է ՅԱՀՎԵՆ որպես Փրկիչ և Ազատագրող
 - գ. Սաղմոս 104-ում *Էլոհիմը* որպես Արարիչ և Պահապան
3. Սաղմոս 32 և 51 երկուսն էլ ըստ երևույթին Բերսաբեի հետ Դավթի գործած մեղքի հետ
4. Սաղմոս 57:7-11 և 60:5-12 միաձուլված են Սաղմոս 108-ում
5. Սաղմոս 18-ը կրկնվում է 2 Թագ. 21:1-51-ից:

Զ. Ինչո՞ւ 150 սաղմոսներ 5 գրքերում

1. հավանաբար 150 սաղմոսները զուգահեռվել են Շաբաթ օրերին հանրային ընթերցանության համար Օրենքի 150 ժողովարանային բաժանումների հետ
2. հավանաբար հինգ գրքերը զուգահեռվել են Մովսեսի հինգ գրքերի հետ

VII. Սաղմոսագրքում ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

Ա. Վերագրություններում առկա երաժշտական տերմինները կիրառվում են նկարագրելու սաղմոսների տարբեր տեսակները՝

1. *ՄԻՉՄՈՐ* նշանակում է «պոկե»։ Սրանք այն սաղմոսներն են, որոնք նախատեսված են երգելու երաժշտական գործիքների նվագակցությամբ։ Կան 57 այսպիսի սաղմոսներ։
2. *ՇԻՐ* վերաբերում է ամեն տեսակի երգերին։ Դրանք 30-ն են։
3. *ՄԱՍԹԻԼ կամ ՄԱՍԿԻԼ*, որը մատնանշում է հատուկ ուղղվածության կամ սովորեցնող սաղմոսներին։ Այսպիսիք 30-ն են։
4. *ՄԻՉԹԱՄ կամ ՄԻԹԻՍԹԱՄ* – այս տերմինի նշանակությունը անհայտ է։ Հավանական է, որ՝
 - ա. երբրայերեն արմատը նշանակում է «ոսկե» կամ «թանկարժեք»
 - բ. Աքքադերեն արմատից կարող է նշանակել «թաքնված» կամ «չիրապարակված»
 - գ. Արաբերեն արմատից այն կարող է նշանակել «քավող» կամ «ներող»
 Գոյություն ունեն այսպիսի 6 սաղմոսներ։
5. *ՓԱԼԱԼ* նշանակում է աղոթք։ Այն կիրառվում է նկարագրելու Դավթի սաղմոսները 1-ին և 2-րդ Գրքերում (տես՝ Սաղմ. 72:20)։ Այն նաև գտնվում է Սաղմոս 17, 86, 90, 102, 142, և հավանաբար 122-ի վերագրություններում։

Բ. Երաժշտական տերմինները նկարագրում են սաղմոսի գործիքավորումը կամ երգեցողությունը՝

1. *ՄԵԼԱ* կիրառվում է 71 անգամ 39 սաղմոսներում և Ամբ. 3:3, 9, 13-ում։ Դրա նշանակությունն անհայտ է։ Գոյություն են ունեցել մի քանի տեսություններ.
 - ա. LXX-ից «անտրակտ» խորհրդածության կամ դրամատիկ էֆֆեկտների համար
 - բ. Եբրայերեն «բարձրացնել» արմատից է, հետևաբար ձայնի բարձրացում կամ ֆորտե
 - գ. ռաբբիներն ասում են, որ դա «ամեն»-ի պես համաձայնության խոսք է, որը նշանակում է «հավիտյան»

2. ՇԻԳԳԱՅՈՆԵ կամ ՇԻԳԻՕՆՕԹ կիրառվում է Սաղմոս 7 և Ամբակում 3-ում: Այն վիշտը ցուցադրող ողբ է կամ սուգ: Այն ունի խորը զգացմունքային բանաստեղծական ոճ:
3. ՆԵԳԻՆՈԹ կիրառվում է 6 անգամ Սաղմոսներում և Ամբ. 3:19-ում: Այն նշանակում է «յարավոր գործիքների վրա»:
4. ՇԵՄԻԻԹ կիրառվում է երկու անգամ: Հնարավոր է նշանակում է «օկտավայի վրա» կամ «ուրթի վրա»: Այն ԱԼԱՄՈԹ-ի հակառակն է, ուստի ըստ երևույթին վերաբերում է արական ձայներին (տես՝ 1 Մնաց. 15:21):
5. ԱԼԱՄՈԹ կիրառվում է 4 անգամ: Այն վերաբերում է իգական սուպրանո ձայներին (տես՝ 1 Մնաց. 15:20):
6. ՄԵԽԻԼՈԹ կիրառվում է մեկ անգամ: Նշանակում է «քամու գործիքների վրա»:
7. ԳԻԹԻԹ կիրառվում է 3 անգամ: Նշանակում է «քնարի վրա»:
8. Գոյություն ունեն մի քանի համարներ, որոնք հատուկ նշում են տոնայնությունները՝ Սաղմոս 9, 22, 45, 53, 56, 57-59, 60, 69, 75, 77, 80 և 88:

VIII. ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Իսրայելը հավատում էր, որ ամբողջ կյանքը կապ ունի Աստծո հետ՝ ուխտի միջոցով: Սաղմոսները մարդու կողմից կյանքի խորը զգացմունքների (ակնածանք և մտերմություն) ազատագրումն է ուղղված Աստծուն: Դրանք գործադրվում էին հավաքական երկրպագության մեջ, ինչպես նաև անհատական նվիրվածությամբ: Դրանք համարվում են Իսրայելի պատմությունն ու աստվածաբանությունը հիշատակող և շեշտադրող ծեսեր:
- Բ. Իսրայելը հավատում էր միայն մեկ անձնական, հոգացող Աստծո և նրանք համարվում էին Նրա սիրո հատուկ առարկան: Հավատքը ծիսական կամ դավանաբանական չէր, այլ անձնական և ամենօրյա: Սաղմոսների բանաստեղծական ձևաչափը օգնում է մեզ Աստծուն արտահայտելու մեր կրոնական էությունը: Հին Կտակարանի գլխավոր հերոսը Աստված է:
- Գ. Բոլոր Սաղմոսները հնարավոր է սկսել են որպես անձնական հավատքի անհատական դրսևորումներ, որոնք հետագայում կիրառվել են հավատքի համայնքի կողմից (տես՝ Սաղմոս 23, 139, և այլն):
- Դ. ՀԿ-ի Սաղմոսներից մեջբերումների կիրառությունից ակնհայտ է, որ դրանք ունեին բացահատող և հուզական բնույթ: Դրանք արտացոլում են Աստծո, մարդկության, մեղքի, հույսի, Մեսիայի և վերականգնման մասին ճշմարտություններ:

IX. ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

- Ա. Այս մեկնությունը փորձում է Սաղմոսները մեկնաբանել հետևյալ լույսի ներքո՝
 1. դրանց պատմական միջոցայրի (այսինքն՝ աշխարհայացքը)
 2. դրանց ժանրի
 3. դիտարկելով, թե ինչպես են ՆԿ-յան հեղինակները կիրառել Սաղմոսները (LXX) հայտնելու և բացատրելու Հիսուս Քրիստոսի ավետարանը:
 4. ի վերջո, այս ճշմարտությունները մեր օրերում կիրառելու համար, սակայն այս կարևորությունը պետք է հետևի #1,2,3-ին:
- Բ. Ես ընտրել եմ վերլուծել զուգահեռականությունը թվարկելով տարրերը: Սա ոտնահարում է ժանրը, սակայն հուսով եմ, որ կօգնի արդի արևմտյան մտավորականությանը տեսնելու բնագրի հեղինակի շեշտադրությունը և բովանդակությունը:
- Գ. Յուրաքանչյուր ընթերցող՝ մեկնաբան կարիք ունի փնտրելու բնագրի հեղինակի հիմնական նպատակները և չներմուծի իր սեփականը: Սա դժվար է մի հնագույն,

բանաստեղծական գրքի դեպքում: Հաճախ մեր օրյա մարդիկ կարդում են Սաղմոսները ինչպես կկարդային առավոտյան լրագիրը, որը գրվել է հենց իրենց համար, իրենց լեզվով և իրենց մշակույթի համաձայն: Այս մեկնաբանական մեթոդով անձը կարող է Սաղմոսներին ստիպել ասել ցանկացած բան ցանկացած թեմայի շուրջ:

Պետք է որ յուրաքանչյուր բաժին ունենա ինչ-որ մի կարևոր նպատակ: Խնդիրն այն է, որ բաժինները տեխնիկական հարց չեն, այլ՝ սուբյեկտիվ: Հնարավոր է մենք դժվարանում են հասկանալ, թե որ մասից են բաժանվում այս հնագույն պոեմները և վստահ չենք, թե արդյո՞ք ունենք հենց այնքան ճշմարտություններ՝ կետեր, որքան որ ուներ բնագրի հեղինակը:

- Գ. Նշեմ ևս մի կետ, որ ինձ համար, ՆԿ-ը համարվում է ՀԿ-ի ճիշտ մեկնությունը: Սաղմոսները նոր ուխտից չեն, այլ Մովսիսական ուխտ են: Դրանք պետք է մեկնաբանվեն և գործադրվեն ՆԿ-ի հայտնության լույսի ներքո: